ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(26-ը մարտի 2025 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ

Երկու հազար քսանվեց թվականի փետրվարի քսաներեքին

«ԵՐԵՎԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» Փակ բաժնետիրական ընկերությունը, հասցե՝ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ Փ., 3, ԵՐԵՎԱՆ, 0033, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ, գրանցման համար՝ 264.140.00339, ՀՎՀՀ՝ 00003489, ի դեմս գլխավոր տնօրեն ՀՀ քաղաքացի **ՌԱՖԱՅԵԼ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ,** ծնված՝ 08/12/1982թ-ին, ՀԾՀ՝ 1812820283, նույնականացման քարտ՝ 018603639, տրված՝ 067-ի կողմից, 17/06/2025թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՋԻՎԱՆՈՒ Փողոց, 9 Տուն հասցեում, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, որի անունից որպես լիազորված անձ հանդես է գալիս ՀՀ քաղաքացի **ՌՈԲԵՐՏ ՀՐԱՉՅԱՅԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ,** ծնված՝ 18/07/1993թ-ին, ՀԾՀ՝ 2807930301, նույնականացման քարտ՝ 008250193, տրված՝ 008-ի կողմից, 12/09/2017թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ՏԻՉԻՆԱՅԻ 4 Նրբանցք, 9/2 Տուն հասցեում), այսուհետ՝ Վարձատու, մի կողմից և **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը,** հասցե՝ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ Փ., 3/3, ԵՐԵՎԱՆ, 0010, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ, գրանցման համար՝ 286.184.1024932, ՀՎՀՀ՝ 02565518, ի դեմս գլխավոր քարտուղար **ԴԱՎԻԹ ՎԱՉԳԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ,** ծնված՝ 04/07/1981թ-ին, ՀԾՀ՝ 1407810154, նույնականացման քարտ՝ 012107975, տրված՝ 013-ի կողմից, 16/03/2021թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆ, ԴԱՎԹԱՇԵՆ 4 Թաղամաս, 22 Շենք, 63 Բնակարան հասցեում, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, որի անունից որպես լիազորված անձ հանդես է գալիս **ԱՐԹՈՒՐ ԿԱՐԵՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ**, ծնված՝ 12/09/1983թ-ին, ՀԾՀ՝ 2209830249, նույնականացման քարտ՝ 008622466, տրված՝ 010-ի կողմից, 30/10/2017թ-ին, հաշվառված՝ ՎԱՅՈՑ ՁՈՐ, ԵՂԵԳՆԱՁՈՐ, ԵՂԵԳՆԱՁՈՐ, ՄՈՄԻԿԻ Փողոց, 2 Շենք, 32 Բնակարան հասցեում) մյուս կողմից, միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1. Երկկողմ փոխադարձ համաձայնությամբ Կողմերը որոշեցին ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար Սիրվարդ Գևորգյանի կողմից 26-ը մարտի 2025թ.-ին վավերացված և թիվ 422 համարի ներքո գրանցամատյանում գրանցված (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25042025-01-0010, գաղտնաբառ՝ EWNYMM2FAFAJ) անշարժ գույքի վարձակալության պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Պայմանագրի 3.1 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3.1 Տարածքի ամսական վարձավճարի չափը սահմանվում է 2 700 900 (երկու միլիոն յոթ հարյուր հազար ինը հարյուր) ՀՀ դրամ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը»,

1.2 Պայմանագրի 3.2 կետը փոփոխել և շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«3.2 Վարձակալը պարտավոր է Վարձատուի հաշվեհամարին փոխանցել յուրաքանչյուր ընթացիկ ամսվա Վարձավճարը, Վարձատուի կողմից ներկայացված հարկային հաշվի հիման վրա, հաշիվը ներկայացնելուց հետո ոչ ուշ քան 10 (տասը) բանկային օրվա ընթացքում: Վերոնշյալ վճարումները պետք է կատարվեն համաձայն պայմանագրին կից հավելված 2–ով սահմանված ժամանակացույցի:

Վարձակալն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:»,

1.3 Պայմանագրի 4.1 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4.1 Սույն Պայմանագրի 3.1 կետով սահմանված հաստատուն վարձավճարը ներառում է Տարածքի սպասարկման վճարները (էլեկտրաէներգիա, ջուր, գազ, աղբահանություն և այլն):»,

1.4 Պայմանագրի 4.1.1 ենթակետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4.1.1 Կողմերը գալիս են համաձայնության, որ Տարածքի մաքրման աշխատանքները մատուցվելու է Վարձատուի կողմից:

Կողմերը փաստում են, որ սույն ենթակետով սահմանված մաքրման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերը տրամադրվելու են Վարձակալի կողմից:

Մաքրման աշխատանքների ծավալների ավելացմամբ պայմանավորված Կողմերը կարող են [illegible] համապատասխան լրացուցիչ ծառայություն»,

2. Սույն Համաձայնագրով հաստատել Պայմանագրին կից Հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցի փոփոխությունները համաձայն Համաձայնագրին կից Հավելված 1-ի:

3. Պայմանագրի մյուս կետերը մնում են անփոփոխ:

4.Գրանցված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմնի վարձակալության իրավունքը՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից «19» Փետրվար 2026թ. տրված թիվ N ՄՏ-19022026-01-0545, գաղտնաբառ՝ MHSFQFKHAKKY միասնական տեղեկանքի:

Համաձայն միասնական տեղեկանքի «**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**» բաժնի՝ Գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների գրանցում կկատարվի ՀՀ կառավարության 29.12.2005թ.-ի հ. 2387-Ն որոշման պահանջներին համապատասխան հասցե ներկայացվելու դեպքում, քանի որ նշված հասցեով առկա է մեկից ավելի գույքային միավորներ: ՀՀ Հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների համաձայն, օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում կկատարվի հաշվառող մարմինների կողմից տրված անշարժ գույքի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից: «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 4-5-րդ և 7-րդ հոդվածների համաձայն՝ գույքի օտարման գործարքների դիմաց որոշակի սահմանաչափերը գերազանցող գումարն անկանխիկ չվճարելու դեպքում տվյալ գործարքներն առոչինչ են:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման և ուժի մեջ է մտնում Կադաստրի կոմիտեում վարձակալի կողմից անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

2.2 Սույն Համաձայնագրով սահմանված պայմանները կիրառելի են 2026 թվականի հունվարի 01-ից:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի բաղկացուցիչ և անբաժանելի մասը: Համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է սույն Համաձայնագրին:

2.4 Սույն Համաձայնագրով չկարգավորված իրավահարաբերությունները մնում են անփոփոխ:

2.5 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.6 Սույն Համաձայնագիրը կազմված է երեք հավասարազոր օրինակներից՝ հայերեն: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մեկ օրինակը թողնվում է նոտարական գրասենյակում:

2.7 Կողմերը հաստատում են, որ սույն Համաձայնագիրը ստորագրել են սթափ վիճակում, առանց ուժի սպառնալիքի, ամբողջությամբ գիտակցում են սույն Համաձայնագրից բխող իրավական հետևանքները:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«ՎԱՐՁԱՏՈՒ»

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ի

լիազորված անձ **Ռոբերտ Հրաչյայի Ղուկասյան**_____

«ՎԱՐՁԱԿԱԼ»

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմնի լիազորված անձ

Արթուր Կարենի Բաղդասարյան_____

վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու
վերաբերյալ 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված համաձայնագրի

«Հավելված 2
26-ը մարտի 2025 թվականին կնքված անշարժ գույքի
վարձակալության պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
չափաբաժնի համարը	պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	70311200/1	Տարածքների վարձակալության ծառայություններ		5,401,800	8,102,700	10,803,600	13,504,500	16,205,400	18,906,300	21,607,200	24,308,100	27,009,000	29,709,900	32,410,800	32,410,800

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:»*

ՎԱՐՁԱՏՈՒ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ
Հ.Հ., 0033 ք.Երևան
Հ.Հակոբյան փող. 3
Էլ.փոստ՝ ervmmg@gmail.com
ՀՎՀՀ-00003489
Հ/Հ-1570013006700100
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Լիազորված անձ՝
Ռ.Ղուկասյան

ՎԱՐՁԱԿԱԼ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Ք. Երևան, Վ. Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011031953
ՀՎՀՀ 02565518
Լիազորված անձ՝
Ա. Բաղդասարյան

[illegible]ական ակտի կոդ: 789-20260223-117-9840423
[illegible]արական ակտի գաղտնագիր: VQMUZO

23/02/2026թ, Երկու հազար քսանվեց թվականի փետրվարի քսաներեքին
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար Սիրվարդ Հուսիկի Գևորգյանիս կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրեցին իմ ներկայությամբ: Նրանց ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները, լիազորված անձանց լիազորությունները ստուգված են:
ՀՀ քաղաքացիական օրենքի 135 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ցանկացած սպասարկման գրասենյակում՝ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:
Գրանցված է գրանցամատյանում № 1660 ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ, որը չի ներառում ավելացված արժեքի հարկը՝ 20% ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Սիրվարդ Հուսիկի Գևորգյան

Н. Нарпирумян 24.02.26г.

Л. Игидумян 23.02.2026г.

Н. Багдасарян 23.02.2026г.